

ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

Բոգդանովկայի (Զավախք, Վրաստան) Ս. Սարգիս եկեղեցին կառուցվել է 1884 թվականին: Բազիլիկ տիպի եկեղեցի է: Արևմտյան պատի ճակատի արձանագրությունից պարզվում է, որ եկեղեցու օծումը կատարել է ժամանակի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը:

Սույն թվականի **նոյեմբերի 12-ին, ուրբաթ օրը** (հին տոմարով), ժամը 12-ին, Բոգդանովկայի Ս. Սարգիս եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալներով և խուռներամ բազմությամբ, որոնք եկել էին ծանոթանալու Վիրահայոց թեմի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանին և ստանալու նրա օրհնությունը:

«Հրաշափառ» և «Ուրախ լեր» շարականի կատարման ընթացքում առաջնորդ սրբազան հայրը մուտք գործեց եկեղեցի՝ ուղեկցությամբ Բոգդանովկայի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Եղիա քահանա Թազայանի և դպիր Գևորգ Կյուրեղյանի:

Արարողությանը ներկա էր Բոգդանովկայի քաղաքագլխի ներկայացուցիչ պրն. Խորեն Հարությանը:

«Ուրախ եղէ» սաղմոսի ընթերցումից հետո սրբազան հայրը քարոզ խոսեց և հաղորդեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Երեկոյան ժամը 16-ին տեղի ունեցավ եկեղեցու նավակատյաց հանդեսը: Կատարվեց նախատոնակ և հսկումի արարողություն: Վերջում առաջնորդ սրբազան հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ շեշտելով օրվա պատմական նշանակությունը:

Երեկոյան, ի պատիվ թեմական առաջնորդի, Կյուրեղյանների հարկի ներքո տրվեց ընթրիք:

Նոյեմբերի 13-ին, շաբաթ օրը, առաջնորդ սրբազան հայրը կատարեց Ս. Սարգիս եկեղեցու հանդիսավոր բացումը և օծումը: Այդ օրը կրկին լեփ-լեցուն էր Ս. Սարգիս եկեղեցին և իր շրջապատը: Այդտեղ էին հավաքվել շրջանի հայաբնակ բազմաթիվ գյուղերից հայության հոծ բազմություն:

Սկսվում է եկեղեցու օծման հոգեպարար արարողությունը: Եկեղեցու օծվող հատվածները նախ լվացվում են ջրով և ապա՝ գինով: Լվացումից հետո նշված հատվածները օծվում են Սրբալույս Մեռոնով՝ խաչանիշ դրոշմամբ:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՑԳԱՐՑԱՆԸ
ՕՄՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ

Ս. ՍԱՐԳԻՍ ՆՈՐԱՕՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՏ

Եկեղեցին կրկին իր նախկին՝ Ս. Սարգիս անունով օծվելուց հետո, հընչեցին հոգևոր երգեր և աղոթքներ: Ապա, Ղուկասու ավետարանի ընթերցումից հետո, առաջնորդ սրբազան հայրը քարոզ խոսեց՝ վեր հանելով նորաօծ Ս. Սարգիս եկեղեցու արդի դերի և նշանակության մասին տեղի հայ հավատավոր ժողովրդի կյանքում: Տասնամյակներ շարունակ եկեղեցին զրկվել էր իր բուն դերից: Այնուհետև Աստուծո այս Տունը իր լուսաշող ճառագայթները հավերժորեն պիտի ափռի շրջանի հայ հավատացյալների հոգիներին:

Սրբազան հայրը այնուհետև խոսեց Ամենայն Սրբոց տոնի մասին, հատկապես Ս. Սարգսի, որը անգնահատելի դեր է ունեցել քրիստոնյա հայ ժողովրդի կյանքում:

Ապա օրվա պատմական նշանակության առթիվ սրբազան հայրը փոխանցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորանքներն ու օրհնությունները:

Վիրահայոց թեմի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի կողմից նարաօծ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ նշանակվեց արժանապատիվ Տ. Եղիա քահանա Թազայանը:

Նույն օրը, ժամը 14-ին, ի պատիվ թեմական առաջնորդ սրբազան հոր, Արզումանյանների հարկի ներքո տրվեց ճաշկերույթ:

Նոյեմբերի 14-ին, կիրակի:— Ը կիրակի զկնի Ս. Խաչի:

Կեսդարյա ընդմիջումից հետո, նորաօծ Ս. Սարգիս եկեղեցում մատուցվեց առաջին ս. պատարագը: Պատարագիչն էր եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Եղիա քահանա Թազայանը:

Ս. պատարագից առաջ, տեղի մտավորականության և ժողովրդի անունից, պրն. Կամո Դալիբալթյանը շնորհակալություն հայտնեց առաջնորդ սրբազան հորը՝ Ս. Սարգիս եկեղեցու օծման և վերաբացման առթիվ, և խոսեց Բոգդանովկայի, Ախալքալաքի և Ախալցխայի պատմության մասին՝ վկայակոչելով հիմնականում Ալեքսանդր Երիցյանի «Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք» խորագիրը կրող գիրքը:

Նախքան ս. պատարագի սկսվելը, կատարվեց ընդհանուր խոստովանություն՝ առաջնորդ սրբազան հոր և պատարագիչ տեր հոր մասնակցությամբ: Ապա սկսվեց ս. պատարագը: Պատարագի Սեղանին սպասարկում էր դպիր Գևորգ Կյուրեղյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց պատարագիչ տեր հայրը՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Վիրահայոց թեմի թեմական առաջնորդին՝ հայոց գործող եկեղեցիների թիվը ևս մեկով ավելացնելու կապակցությամբ, որին այնքան պապակած էր Բոգդանովկայի և շրջակայքի հայությունը:

Ս. պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ Բոգդանովկայի և շրջակայքի հանգուցյալների հոգիների խաղաղության համար:

Նոյեմբերի 15-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, ի պատիվ առաջնորդ սրբազան հոր, Բոգդանովկայի քաղաքապետարանում տեղի ունեցավ ընդունելություն քաղաքապետի կողմից: Սրբազան հորը ուղեկցում էին արժանապատիվ Տ. Եղիա քահանա Թազայանը և դպիր Գևորգ Կյուրեղյանը:

Ընդունելությունն անցավ ջերմ և մտերմիկ մթնոլորտում:

Նույն օրը գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

71-95